ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱ ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Կոնվենցիայի Կողմերը,

գիտակցելով, որ Երկիր մոլորակի կլիմայի փոփոխությունը եւ դրա անբարենպաստ հետեւանքները ողջ մարդկության մտավախությունն են հանդիսանում,

անհանգստացած լինելով այն փաստով, որ մարդկային գործունեության արդյունքում տեղի է ունեցել մթնոլորտում ջերմոցային գազերի պարունակության զգալի աճ, եւ որ այդպիսի աճը սաստկացնում է բնական ջերմոցային էֆեկտը, եւ որ դա կբերի միջինում Երկիր մոլորակի մակերեւույթի եւ մթնոլորտի լրացուցիչ տաքացման եւ անբարենպաստ ազդեցություն կարող է գործել բնական էկոհամակարգերի եւ համայն մարդկության վրա,

նշելով, որ անցյալում տեղի ունեցած եւ ներկայումս տեղի ունեցող ջերմոցային գազերի գլոբալ արտանետումների գերակշռող բաժնեմասն առաջացել է զարգացած երկրներում, որ զարգացող երկրներում արտանետումների ծավալը մեկ շնչի հաշվարկով համեմատաբար ցածր է, եւ որ զարգացող երկրներում տեղի ունեցող գլոբալ արտանետումների բաժնեմասն աճելու է՝ կապված դրանց սոցիալական եւ զարգացման կարիքների բավարարման հետ,

հաշվի առնելով ջերմոցային գազերի կլանիչների եւ կուտակիչների դերը եւ նշանակությունը ցամաքային եւ ծովային էկոհամակարգերում,

նշելով կլիմայի փոփոխությունների կանխատեսումների անորոշությունը, մասնավորապես, դրանց ժամկետների, ծավալների եւ տարածաշրջանային յուրահատկությունների վերաբերյալ,

գիտակցելով, որ կլիմայի փոփոխության գլոբալ բնույթը աշխարհի բոլոր երկրներից պահանջում է առավել լայն համագործակցություն եւ մասնակցություն արդյունավետ եւ ճիշտ արձագանքմանը՝ դրանց ընդհանուր, սակայն, տարբերակված պատասխանատվությանը եւ իրական կարողություններին, ինչպես նաեւ սոցիալական եւ տնտեսական պայմաններին համապատասխան,

վկայակոչելով 1972 թ. հունիսի 16-ին Ստոկհոլմում ընդունված Միավորված ազգերի կազմակերպության՝ մարդուն շրջապատող միջավայրին նվիրված համաժողովի Հռչակագրի համապատասխան դրույթները,

մտաբերելով նաեւ, որ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրության եւ միջազգային իրավունքի սկզբունքների համաձայն՝ պետություններն ինքնիշխան իրավունք ունեն շահագործելու իրենց պաշարները՝ շրջակա միջավայրի եւ զարգացման ոլորտում իրենց քաղաքականությանը համապատասխան, եւ պետք է ապահովեն, որ իրենց
իրավազորության կամ վերահսկողության շրջանակներում իրականացվող գործունեությունը որեւէ վնաս չպատճառի այլ պետությունների կամ ազգային իրավազորության գործողության շրջանակից դուրս գտնվող տարածքների շրջակա միջավայրին,

վերահաստատելով կլիմայի փոփոխությունների ոլորտում միջազգային համագործակցության շրջանակներում պետությունների ինքնիշխանության սկզբունքը,

գիտակցելով, որ պետությունները պետք է ընդունեն շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները կարգավորող արդյունավետ օրենսդրություն, եւ որ բնապահպանական
չափանիշները եւ կառավարման նպատակներն ու առաջնայնությունները պետք է արտացոլեն շրջակա միջավայրի եւ զարգացման այն ասպեկտները, որոնց նկատմամբ դրանք կիրառվում են, եւ որ որոշ երկրների կողմից կիրառվող չափանիշները այլ երկրների, մասնավորապես, զարգացող երկրների տնտեսական եւ սոցիալական ծախսերի տեսանկյունից կարող են լինել անտեղի եւ չհիմնավորված,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության՝ շրջակա միջավայրի եւ զարգացման համաժողովի վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի 1989 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 44/228 որոշումը եւ մարդկության ներկա ու ապագա սերունդների համար գլոբալ կլիմայի պահպանման վերաբերյալ 1988 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 43/53, 1989 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 44/207, 1990 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 45/212 եւ 1991 թ. դեկտեմբերի 19-ի 46/169 որոշումները,

վկայակոչելով նաեւ կղզիների եւ առափնյա շրջանների, մասնավորապես, ցածրադիր առափնյա շրջանների համար ծովի մակարդակի բարձրացման հնարավոր անբարենպաստ հետեւանքների վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի 1989 թ. դեկտեմբերի 22-ի թիվ 44/206 որոշման դրույթները եւ Անապատացման դեմ պայքարի ծրագրի իրականացման վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի 1989 թ. դեկտեմբերի 19-ի թիվ 44/172 որոշման համապատասխան դրույթները,

վկայակոչելով նաեւ Օզոնային շերտի պահպանության մասին 1985 թ. Վիեննայի կոնվենցիան, ինչպես նաեւ Օզոնային շերտը քայքայող նյութերի վերաբերյալ 1987 թ. Մոնրեալի արձանագրությունը՝ 1990 թ. հունիսի 29-ին կատարված փոփոխություններով եւ լրացումներով,

նկատի առնելով 1990 թ. նոյեմբերի 7-ին՝ կլիմայի խնդիրներին նվիրված համաշխարհային երկրորդ համաժողովին ընդունված Նախարարների հռչակագիրը,

գիտակցելով կլիմայի փոփոխությունների ոլորտում բազմաթիվ պետությունների կողմից իրականացվող վերլուծական աշխատանքների կարեւորությունը եւ Օդերեւութաբանության միջազգային կազմակերպության, Միավորված ազգերի կազմակերպության՝ շրջակա միջավայրի ծրագրի եւ Միավորված ազգերի կազմակերպության այլ մարմինների եւ կազմակերպությունների, ինչպես նաեւ այլ միջազգային եւ միջկառավարական մարմինների կողմից գիտական հետազոտությունների արդյունքների փոխանակման եւ հետազոտությունների համադրման մեջ կատարված ներդրման նշանակությունը,

ընդունելով, որ կլիմայի փոփոխությունների խնդիրներն ընկալելու եւ լուծելու համար պահանջվող միջոցներն առավել արդյունավետ կլինեն բնապահպանական, սոցիալական եւ տնտեսական առումներով միմիայն այն դեպքում, եթե դրանք հիմնված լինեն համապատասխան գիտական, տեխնիկական եւ տնտեսական նկատառումների վրա եւ
մշտապես վերագնահատվեն՝ հաշվի առնելով նշված ոլորտներում ստացված նոր արդյունքները,

ընդունելով, որ կլիմայի փոփոխությունների հետ կապված խնդիրների լուծմանն ուղղված միջոցները կարող են տնտեսապես արդարացված լինել, ինչպես նաեւ նպաստել բնապահպանական այլ խնդիրների լուծմանը,

ընդունելով նաեւ զարգացած երկրների կողմից որպես առաջին քայլ հստակ սահմանված առաջնայնությունների հիման վրա գլոբալ, ազգային եւ, համաձայնեցման դեպքում, տարածաշրջանային մակարդակների վրա արձագանքման համապարփակ ռազմավարությունների մշակման ուղղությամբ այնպիսի ճկուն միջոցներ ձեռնարկելու հրատապ անհրաժեշտությունը, որոնք կընդգրկեին ջերմոցային բոլոր գազերը՝ պատշաճ կերպով հաշվի առնելով ջերմոցային էֆեկտի սաստկացման մեջ դրանցից յուրաքանչյուրի բաժնեմասը,

ընդունելով նաեւ, որ ցածրադիր եւ կղզիների վրա գտնվող այլ փոքր երկրները, ցածրադիր առափնյա, երաշտային եւ կիսաերաշտային կամ ջրհեղեղների, երաշտի եւ անապատացման ենթարկվող շրջաններ ունեցող երկրները եւ լեռնային խոցելի էկոհամակարգեր ունեցող երկրներն առավել զգայուն են կլիմայի փոփոխությունների անբարենպաստ հետեւանքների նկատմամբ,

ընդունելով վառելիքի հանածո տեսակների արդյունահանումից, օգտագործումից եւ արտահանումից կախված տնտեսություն ունեցող երկրների, մասնավորապես, զարգացող երկրների դժվարությունները, որոնք ծագում են ջերմոցային գազերի արտանետումների

նվազեցմանն ուղղված միջոցների իրականացման արդյունքում,

հաստատելով, որ կլիմայի փոփոխություններին արձագանքելու միջոցները դրա վրա անբարենպաստ ազդեցությունը բացառելու նպատակով պետք է համադրված լինեն սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված միջոցների ընդհանուր համալիրի հետ՝ լիովին հաշվի առնելով զարգացող երկրների օրինական առաջնային կարիքները կայուն տնտեսական աճի եւ աղքատության արմատահանման գործում,

ընդունելով, որ բոլոր երկրներին, մասնավորապես, զարգացող երկրներին մուտք է պահանջվում դեպի կայուն սոցիալ-տնտեսական զարգացման համար անհրաժեշտ պաշարները, եւ որ այդ նպատակի իրականացման ուղղությամբ առաջընթաց ապրելու համար զարգացող երկրներում էներգիայի սպառման ծավալները պետք է աճեն՝ հաշվի առնելով սպառման ավելի բարձր արդյունավետության հասնելու եւ ջերմոցային գազերի արտանետումների դեմ պայքարի հնարավորությունները, այդ թվում՝ արդիական տեխնոլոգիաների կիրառման միջոցով եւ այնպիսի պայմաններով, որոնք այդ կիրառումն ավելի շահավետ են դարձնում տնտեսական եւ սոցիալական տեսանկյուններից,

վճռելով պաշտպանել կլիմայի համակարգը՝ ի շահ ներկա եւ ապագա սերունդների,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ *)

---

*) Հոդվածների անվանումները բերված են բացառապես ընթերցողին օգնելու համար:

Սույն Կոնվենցիայի իմաստով.

"Կլիմայի փոփոխության անբարենպաստ հետեւանքները" ֆիզիկական միջավայրում կամ բիոտայում կլիմայի փոփոխության արդյունքում առաջացած այն փոփոխություններն են, որոնք զգալի բացասական ազդեցություն են գործում բնական եւ կառավարվող էկոհամակարգերի կառուցվածքի, վերարտադրման կարողության կամ արտադրողականության, սոցիալ-տնտեսական համակարգերի գործունեության կամ մարդու
առողջության եւ բարեկեցության վրա:

"Կլիմայի փոփոխությունը" կլիմայի այնպիսի փոփոխություն է, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն պայմանավորված է գլոբալ մթնոլորտի բաղադրության մեջ փոփոխություններ առաջացնող մարդկային գործունեությամբ, եւ որը հավելվում է համեմատելի ժամանակահատվածների ընթացքում դիտարկվող կլիմայի բնական տատանումներին:

"Կլիմայական համակարգը" մթնոլորտի, ջրոլորտի, կենսոլորտի եւ երկրոլորտի ամբողջությունն է եւ դրանց փոխգործակցությունը:

"Արտանետումները" ջերմոցային գազերի եւ/կամ դրանց պրեկուրսորների բացթողումներ են մթնոլորտ որոշակի շրջանի վրա եւ որոշակի ժամանակահատվածում:

"Ջերմոցային գազերը" մթնոլորտի ինչպես բնական, այնպես էլ արհեստական ծագում ունեցող այն գազանման բաղադրիչներն են, որոնք կլանում եւ վերարտացոլում են ինֆրակարմիր ճառագայթումը:

"Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունը" տվյալ տարածաշրջանի ինքնիշխան պետությունների կողմից հիմնադրված կազմակերպություն է,
որի իրավասություններն ընդգրկում են սույն Կոնվենցիայով եւ դրա արձանագրություններով կարգավորվող հարցերը, եւ որը պատշաճ կերպով, իր ներքին ընթացակարգերին համապատասխան, լիազորված է ստորագրել, վավերացնել, ընդունել եւ
հաստատել համապատասխան փաստաթղթերը կամ միանալ դրանց:

"Կուտակիչը" կլիմայական համակարգի այն բաղադրիչն է կամ բաղադրիչներն են, որոնց մեջ տեղի է ունենում ջերմոցային գազի կամ ջերմոցային գազի պրեկուրսորի կուտակում:

"Կլանիչը" ցանկացած այն գործընթացն է, գործունեության տեսակը կամ մեխանիզմը, որը մթնոլորտից կլանում է ջերմոցային գազը, աերոզոլը կամ ջերմոցային գազի պրեկուրսորը:

"Աղբյուրը" ցանկացած այն գործընթացն է կամ գործունեության տեսակը, որի արդյունքում մթնոլորտ են մուտք գործում ջերմոցային գազը, աերոզոլը կամ ջերմոցային գազի պրեկուրսորը:

ՀՈԴՎԱԾ 2. ՆՊԱՏԱԿԸ

Սույն Կոնվենցիայի եւ դրա հետ կապված բոլոր այն իրավական փաստաթղթերի նպատակը, որոնք Կողմերի Համաժողովը կարող է ընդունել, սույն Կոնվենցիայի համապատասխան դրույթների համաձայն՝ մթնոլորտում ջերմոցային գազերի պարունակության այնպիսի մակարդակի ապահովումն է, որը կբացառի վտանգավոր մարդածին ներգործությունը կլիմայական համակարգի վրա: Այդպիսի մակարդակը պետք է
ապահովվի կլիմայի փոփոխությանը էկոհամակարգերի բնական հարմարեցման համար բավարար ժամկետներում, ինչը թույլ կտա վտանգի տակ չդնել սննդի արտադրությունը եւ կապահովի հետագա տնտեսական զարգացումը կայուն հիմքերի վրա:

ՀՈԴՎԱԾ 3. ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Կոնվենցիայի նպատակի կենսագործմանն ու դրա դրույթների կատարմանն ուղղված իրենց գործունեության իրականացման ընթացքում Կողմերը ղեկավարվում են մասնավորապես հետեւյալ սկզբունքներով:

1. Կողմերը պետք է պահպանեն կլիմայական համակարգը՝ ի շահ մարդկության ներկա եւ ապագա սերունդների՝ հավասարության հիմունքներին եւ իրենց ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվության եւ իրենց առկա կարողություններին համապատասխան: Ուժեղ զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը պետք է առաջատար
դերը տանեն կլիմայի փոփոխության եւ դրա բացասական հետեւանքների դեմ պայքարում:

2. Անհրաժեշտ է լիովին հաշվի առնել զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի հատուկ կարիքները եւ հատուկ պայմանները. մանավանդ այն Կողմերի, որոնք հատկապես խոցելի են կլիմայի փոփոխության բացասական հետեւանքների առջեւ, ինչպես նաեւ այն Կողմերի, մասնավորապես, զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի, որոնք, սույն Կոնվենցիայի համաձայն, պետք է կրեն անհամաչափ կամ աննորմալ բեռ:

3. Կողմերը պետք է նախազգուշացնող միջոցներ ձեռնարկեն կլիմայի փոփոխության պատճառների կանխատեսման, կանխարգելման կամ նվազեցման, ինչպես նաեւ դրա բացասական հետեւանքների մեղմացման նպատակով: Այնտեղ, որտեղ առկա է լուրջ կամ անդառնալի վնասի վտանգը, լիարժեք գիտական ճշգրտության պակասը չպետք է օգտագործվի որպես այդպիսի միջոցների իրականացման հետաձգման պատճառ՝ հաշվի առնելով, որ կլիմայի փոփոխության դեմ պայքարին ուղղված քաղաքականությունն ու միջոցները պետք է տնտեսապես արդյունավետ լինեն՝ նվազագույն հնարավոր ծախսերով գլոբալ բարիքներ ապահովելու համար: Այս նպատակով այդպիսի քաղաքականության ու միջոցների մշակման եւ իրականացման ընթացքում պետք է հաշվի առնվեն սոցիալ-տնտեսական տարբեր պայմանները, այդ քաղաքականությունն ու միջոցները պետք
է լինեն համապարփակ, ընդգրկեն ջերմոցային գազերի բոլոր համապատասխան աղբյուրները, կլանիչներն ու կուտակիչները, հարմարեցման միջոցները եւ տնտեսական

բոլոր հատվածները: Կլիմայի փոփոխությանն արձագանքելուն ուղղված ջանքերը շահագրգիռ Կողմերը կարող են ձեռնարկել համատեղ հիմունքներով:

4. Կողմերն ունեն կայուն զարգացման իրավունք եւ պետք է նպաստեն դրան: Մարդածին փոփոխությունների հետեւանքներից կլիմայական համակարգի պահպանության քաղաքականությունն ու միջոցները պետք է համապատասխանեն յուրաքանչյուր Կողմի որոշակի պայմաններին եւ պետք է համատեղվեն զարգացման ազգային ծրագրերի հետ, քանի որ տնտեսական զարգացումը կարեւորագույն նշանակություն ունի կլիմայի փոփոխությանն արձագանքելուն ուղղված միջոցներ ձեռնարկելու համար:

5. Կողմերը պետք է համագործակցեն բարենպաստ եւ բաց միջազգային տնտեսական համակարգի ստեղծմանն օժանդակելու նպատակով, որը կբերի բոլոր Կողմերի, մանավանդ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի կայուն տնտեսական աճին եւ զարգացմանը՝ դրանով իսկ Կողմերին թույլ տալով ավելի արդյունավետ արձագանքել կլիմայի փոփոխության խնդիրներին: Կլիմայի փոփոխության դեմ պայքարին ուղղված միջոցները, այդ թվում՝ միակողմանի միջոցները, չպետք է կամայական կամ չհիմնավորված խտրականության կամ միջազգային առեւտրի սահմանափակման սքողված սահմանափակման պատճառ հանդիսանան:

ՀՈԴՎԱԾ 4. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բոլոր Կողմերը, նկատի առնելով իրենց ընդհանուր, սակայն տարբերակված պատասխանատվությունը եւ ազգային կամ տարածաշրջանային զարգացման իրենց որոշակի առաջնայնությունները, նպատակներն ու պայմանները.

ա/ մշակում, պարբերաբար թարմացնում, հրապարակում եւ, 12-րդ հոդվածին համապատասխան, Կողմերի Համաժողովին են ներկայացնում Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող բոլոր ջերմոցային գազերի աղբյուրներից կատարվող մարդածին արտանետումների եւ կլանիչների կողմից դրանց կլանման ազգային կադաստրները՝ Կողմերի Համաժողովի կողմից համաձայնեցման ենթակա համատեղելի մեթոդաբանությունների կիրառմամբ,

բ/ ձեւակերպում, իրականացնում, հրապարակում եւ պարբերաբար թարմացնում են ազգային եւ, համապատասխան դեպքերում, տարածաշրջանային ծրագրերը, որոնք ընդգրկում են Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող բոլոր ջերմոցային գազերի աղբյուրներից կատարվող մարդածին արտանետումների եւ կլանիչների կողմից դրանց կլանման խնդրի լուծման միջոցով կլիմայի փոփոխության հետեւանքների անցկացմանն ուղղված եւ կլիմայի փոփոխությանը համապատասխան կերպով հարմարեցմանը նպաստող միջոցներ,

գ/ օժանդակություն են ցուցաբերում եւ համագործակցում են Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի մարդածին արտանետումների սահմանափակմանը, նվազեցմանը կամ դադարեցմանը բերող տեխնոլոգիաների, մեթոդների եւ գործընթացների մշակման, կիրառման, տարածման, այդ թվում՝ փոխանցման գործում՝ համապատասխան բոլոր ոլորտներում՝ ներառյալ էներգետիկան, տրանսպորտը, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, անտառտնտեսությունը եւ թափոնների հեռացումը,

դ/ նպաստում են Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող բոլոր ջերմոցային գազերի կլանիչների եւ կուտակիչների, այդ թվում՝ կենսազանգվածի, անտառների,

օվկիանոսների ու ցամաքային, առափնյա եւ ծովային այլ էկոհամակարգերի կայուն կառավարմանը, ինչպես նաեւ համապատասխան դեպքերում օժանդակություն են ցուցաբերում եւ համագործակցում են դրանց պահպանության եւ որակի բարձրացման գործում,

ե/ համագործակցում են կլիմայի փոփոխության հետեւանքներին հարմարվելուն նախապատրաստվելու գործում. մշակում եւ զարգացնում են առափնյա գոտում տնտեսության կառավարման, ջրային պաշարներին ու գյուղատնտեսությանն առնչվող, երաշտից ու անապատացումից տուժած շրջանների, մասնավորապես, Աֆրիկայում գտնվող շրջանների պաշտպանությանն ու վերականգնմանն ուղղված համապատասխան համալիր ծրագրեր,

զ/ իրենց համապատասխան սոցիալական, տնտեսական եւ բնապահպանական քաղաքականության եւ միջոցառումների իրականացման ժամանակ հնարավորին չափ հաշվի են առնում կլիմայի փոփոխության հետ կապված նկատառումները եւ կիրառում են համապատասխան մեթոդները, օրինակ՝ հետեւանքների գնահատումը՝ ձեւակերպված եւ սահմանված ազգային մակարդակի վրա, կլիմայի փոփոխության հետեւանքների մեղմացման կամ դրան հարմարվելու նպատակով դրանց կողմից իրականացվող ծրագրերի կամ միջոցառումների բացասական ազդեցությունը տնտեսության, հասարակության առողջության եւ շրջակա միջավայրի որակի վրա նվազեցնելու համար,

է/ օժանդակություն են ցուցաբերում եւ համագործակցում են գիտական, տեխնոլոգիական, տեխնիկական, սոցիալ-տնտեսական եւ այլ հետազոտությունների իրականացման, համակարգված դիտարկումների եւ կլիմայական համակարգի հետ կապված ու գիտելիքների խորացման, ինչպես նաեւ կլիմայի փոփոխության պատճառների, հետեւանքների, ծավալների եւ ժամկետների վերաբերյալ եւ արձագանքման տարբեր ռազմավարությունների տնտեսական եւ սոցիալական հետեւանքների առնչությամբ մնացյալ անորոշությունների նվազեցման կամ վերացման գործում,

ը/ օժանդակություն են ցուցաբերում եւ համագործակցում են կլիմայական համակարգի եւ կլիմայի փոփոխության, ինչպես նաեւ արձագանքման տարբեր ռազմավարությունների տնտեսական եւ սոցիալական հետեւանքների հետ կապված համապատասխան գիտական, տեխնոլոգիական, տեխնիկական եւ սոցիալ-տնտեսական բնույթի տեղեկատվության լիարժեք, բաց եւ օպերատիվ փոխանակման գործում,

թ/ օժանդակություն են ցուցաբերում եւ համագործակցում են կլիմայի փոփոխության հարցերով կրթության, կադրերի պատրաստման եւ բնակչության իրազեկման գործում եւ խրախուսում են ամենալայն մասնակցությունն այդ գործընթացին, այդ թվում՝ ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությունը, եւ

ժ/ 12-րդ հոդվածին համապատասխան՝ Կողմերի Համաժողովին են ուղղում իրականացման վերաբերյալ տեղեկատվություն:

2. Զարգացած պետություններ հանդիսացող Կողմերը եւ 1-ին հավելվածում ընդգրկված Կողմերն ստանձնում են հետեւյալ պարտավորությունները.

ա/ այդ Կողմերից յուրաքանչյուրն իրականացնում է իր ազգային քաղաքականությունը *) եւ համապատասխան միջոցներ է ձեռնարկում՝ իր տարածքում ջերմոցային գազերի մարդածին արտանետումների սահմանափակման եւ ջերմոցային գազերի՝ իր կլանիչների ու կուտակիչների որակի բարձրացման միջոցով կլիմային փոփոխության հետեւանքների մեղմացման նպատակով: Այդ քաղաքականությունն ու միջոցները կցուցադրեն զարգացած երկրների առաջնորդությունը սույն Կոնվենցիային համապատասխան մարդածին արտանետումների առումով երկարաժամկետ միտումների

փոփոխման գործում՝ գիտակցելով այն փաստը, որ մինչեւ այս տասնամյակի վերջը ածխածնի երկօքսիդի եւ Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող այլ ջերմոցային գազերի մարդածին արտանետումների նախկին ցուցանիշներին վերադառնալը կնպաստի այդպիսի փոփոխմանը եւ, հաշվի առնելով այդ Կողմերի ելակետների եւ մոտեցումների, ինչպես նաեւ դրանց տնտեսական կառուցվածքների եւ պաշարների բազաների մեջ առկա տարբերությունները, տնտեսական աճի բարձր եւ կայուն ցուցանիշների պահպանման կարեւորությունը, առկա տեխնոլոգիաները եւ այլ առանձին պայմանները, ինչպես նաեւ տվյալ նպատակի իրագործմանն ուղղված գլոբալ ջանքերի մեջ այդ Կողմերից յուրաքանչյուրի հավասար եւ համապատասխան ներդրման անհրաժեշտությունը: Այդ Կողմերը կարող են այդպիսի քաղաքականություն ու միջոցներ իրականացնել այլ Կողմերի հետ համատեղ եւ աջակցություն ցուցաբերել դրանց սույն Կոնվենցիայի, այդ թվում՝ սույն ենթակետի նպատակների իրագործման մեջ ներդրում կատարելու գործում:

---

* Այն ընդգրկում է տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից իրականացվող քաղաքականությունն ու միջոցները:

բ/ այս ուղղությամբ առաջընթաց ապահովելու նպատակով Կողմերից յուրաքանչյուրը, 12-րդ հոդվածին համապատասխան, իր համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում, իսկ հետագայում՝ կանոնավոր հիմունքներով, մանրամասն տեղեկություններ է տրամադրում "ա" ենթակետում նշված իր քաղաքականության եւ միջոցների, ինչպես նաեւ դրանց հետ կապված աղբյուրներից՝ 1990 թ. Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի կանխատեսվող
մարդածին արտանետումների եւ դրանց կլանման վերաբերյալ: Կողմերի Համաժողովն այդ տեղեկատվությունը ուսումնասիրման կենթարկի իր առաջին նիստում, իսկ հետագայում նման ուսումնասիրություններ կանցկացնի կանոնավոր հիմունքներով՝ 7-րդ հոդվածին համապատասխան:

գ/ "բ" ենթակետի նպատակների համար աղբյուրներից ջերմոցային գազերի արտանետումների եւ կլանման ծավալների հաշվարկման համար անհրաժեշտ է նկատի առնել առկա լավագույն գիտական գիտելիքները, այդ թվում՝ կլանիչների փաստացի տարողության եւ կլիմայի փոփոխության տեսակետից այդ գազերի համապատասխան ազդեցության վերաբերյալ: Կողմերի Համաժողովն իր առաջին նիստում քննարկում եւ համաձայնեցնում է այդ հաշվարկների մեթոդաբանությունները, իսկ հետագայում դրանք քննարկում է կանոնավոր հիմունքներով:

դ/ Կողմերի Համաժողովն իր առաջին նիստում քննարկման է ենթարկում "ա" եւ "բ" ենթակետերի համապատասխանությունը: Այդ քննարկումն անցկացվում է՝ հաշվի առնելով առկա լավագույն գիտական տեղեկատվությունն ու կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքների գնահատականը, ինչպես նաեւ համապատասխան տեխնիկական, սոցիալական եւ տնտեսական բնույթի տեղեկատվությունը: Այդ քննարկման հիման վրա Կողմերի Համաժողովը ձեռնարկում է համապատասխան գործողություններ, որոնք կարող են ընդգրկել "ա" եւ "բ" ենթակետերով սահմանված պարտավորություններում փոփոխությունների կատարումը: Կողմերի Համաժողովն իր առաջին նիստում նաեւ որոշումներ է ընդունում համատեղ իրականացման չափանիշների վերաբերյալ, ինչպես նշված է "ա" ենթակետում: "ա" եւ "բ" ենթակետերի երկրորդ քննարկումը կանցկացվի 1998 թ. դեկտեմբերի 31-ից ոչ ուշ, իսկ հետագայում՝ Կողմերի Համաժողովի կողմից սահմանված հաճախականությամբ՝ մինչեւ սույն Կոնվենցիայի նպատակների իրականացումը:

ե/ այդ Կողմերից յուրաքանչյուրը.

i. անհրաժեշտության դեպքում այդպիսի այլ Կողմերի հետ համատեղ համադրում է սույն Կոնվենցիայի նպատակների իրագործման նպատակով մշակված համապատասխան

տնտեսական եւ վարչարարական փաստաթղթերը,

ii. սահմանում եւ պարբերաբար նորացնում է սեփական քաղաքականությունն ու գործնական մեթոդները, որոնք նպաստում են Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի մարդածին արտանետումների ավելի բարձր ցուցանիշների բերող գործունեությունը, քան հակառակ դեպքում արձանագրվողներն են:

գ/ Կողմերի Համաժողովը ոչ ուշ, քան մինչեւ 1998 թ. դեկտեմբերի 31-ը ուսումնասիրում է առկա տեղեկատվությունը 1-ին եւ 2-րդ հավելվածներում ներառված ցանկերում շահագրգիռ Կողմի համաձայնությամբ այնպիսի փոփոխություններ կատարելու
որոշումներ ընդունելու նպատակով, որոնք կարող են անհրաժեշտ լինել:

է/ 1-ին հավելվածում չներառված ցանկացած Կողմ կարող է իր վավերագրում, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթում կամ հետագայում՝ ցանկացած այլ ժամանակ, ավանդապահին ծանուցել "ա" եւ "բ" ենթակետերով սահմանված
պարտավորությունները ստանձնելու մտադրության մասին: Ավանդապահը Կոնվենցիան ստորագրողներին եւ այլ Կողմերին տեղեկացնում է ցանկացած այդպիսի ծանուցման մասին:

3. Զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը եւ զարգացած պետությունների թվին պատկանող՝ 2-րդ հավելվածում ներառված այլ Կողմերը նոր եւ լրացուցիչ ֆինանսական միջոցներ են հատկացնում զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին 12-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված պարտավորությունների կատարման հետ կապված բոլոր համաձայնեցված ծախսերը հոգալու նպատակով: Նրանք նաեւ հատկացնում են այնպիսի ֆինանսական միջոցներ, այդ թվում՝ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին տեխնոլոգիաներ տրամադրելու համար անհրաժեշտ միջոցներ, որոնք ուղղվում են սույն հոդվածի 1-ին կետում ներառված միջոցների իրականացման հետ կապված լրացուցիչ համաձայնեցված բոլոր ծախսերը հոգալուն եւ համաձայնեցված են զարգացող երկիր հանդիսացող Կողմի եւ 11-րդ հոդվածում նշված միջազգային մարմնի կամ մարմինների միջեւ՝ սույն հոդվածին համապատասխան: Այդ պարտավորությունների կատարման ժամանակ հաշվի է առնվում միջոցների հոսքի համապատասխանության եւ կանխատեսելիության ապահովման անհրաժեշտությունը եւ զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի միջեւ բեռան համապատասխան բաշխման կարեւորությունը:

4. Զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը եւ զարգացած պետությունների թվին պատկանող՝ 2-րդ հավելվածում ներառված այլ Կողմերն աջակցություն են ցուցաբերում զարգացող երկրներ հանդիսացող այն Կողմերին, որոնք առավել խոցելի են կլիմայի փոփոխության բացասական հետեւանքների առջեւ՝ այդ բացասական հետեւանքներին հարմարվելու հետ կապված ծախսերը հոգալու համար:

5. Զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը եւ զարգացած պետությունների թվին պատկանող՝ 2-րդ հավելվածում ներառված այլ Կողմերը ձեռնարկում են բոլոր գործնական քայլերը՝ այլ Կողմերին, մասնավորապես, զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին էկոլոգիապես անվտանգ տեխնոլոգիաների եւ "նոու-հաու"-ի փոխանցմանն ու դրանց մատչելիության ապահովմանն օժանդակելու, այն հեշտացնելու եւ համապատասխան
դեպքերում նաեւ ֆինանսավորելու ուղղությամբ, որպեսզի հնարավորություն ընձեռվի կատարելու սույն Կոնվենցիայի դրույթները: Այս գործընթացում զարգացած երկրներ հանդիսացող Կողմերն օժանդակում են զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի ազգային ներուժի եւ տեխնոլոգիաների զարգացմանն ու ամրապնդմանը: Այլ Կողմերն ու կազմակերպությունները, որոնք իրավասու են այդպես գործել, նույնպես կարող են աջակցություն ցուցաբերել այդպիսի տեխնոլոգիաների փոխանցմանը նպաստելու գործում:

6. Կողմերի Համաժողովը որոշակի ճկունությամբ կմոտենա 1-ին հավելվածում

ներառված՝ շուկայական տնտեսությանն անցնող Կողմերին 2-րդ ենթակետով սահմանված պարտավորությունների կատարման ընթացքում, որպեսզի ամրապնդվեն կլիմայի փոփոխության հետ կապված հիմնախնդիրներով զբաղվելու նրանց կարողությունները, այդ թվում՝ հաշվի առնելով Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող ջերմոցային գազերի մարդածին արտանետումների պատմական մակարդակը՝ ընդունված որպես ելակետային ցուցանիշ:

7. Զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի՝ Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների կատարման արդյունավետության աստիճանը կախված կլինի զարգացած երկրներ հանդիսացող Կողմերի՝ ֆինանսական միջոցների հատկացման եւ տեխնոլոգիաների փոխանցման հետ կապված Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների արդյունավետ կատարումից, ընդ որում, լիարժեք կերպով հաշվի է առնվելու այն փաստը, որ տնտեսական եւ սոցիալական զարգացումն ու աղքատության վերացումը զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի հիմնական եւ գերակշռող առաջնայնություններն են հանդիսանում:

8. Սույն հոդվածով սահմանված պարտավորությունները կատարելիս Կողմերը լիարժեք կերպով ուսումնասիրում են այն հարցը, թե Կոնվենցիային համապատասխանող ինչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել, ներառյալ ֆինանսավորման, ապահովագրման եւ տեխնոլոգիաների փոխանցման հետ կապված միջոցները, կլիմայի փոփոխության բացասական հետեւանքների եւ/կամ արձագանքման միջոցառումների իրականացման արդյունքում զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի մոտ առաջացած որոշակի կարիքները եւ մտավախությունը հաշվի առնելու համար. մասնավորապես, դա վերաբերում է՝

ա/ կղզիների վրա գտնվող փոքր երկրներին,

բ/ ցածրադիր առափնյա շրջաններ ունեցող երկրներին,

գ/ երաշտահար կամ կիսաերաշտահար եւ անտառածածկ շրջաններ, ինչպես նաեւ ոչնչացող անտառներով շրջաններ ունեցող երկրներին,

դ/ տարերային աղետների ենթարկվող շրջաններ ունեցող երկրներին,

ե/ երաշտի եւ անապատացման ենթարկվող շրջաններ ունեցող երկրներին,

զ/ քաղաքային շրջաններում մթնոլորտային բարձր աղտոտման ենթարկվող շրջաններ ունեցող երկրներին,

է/ խոցելի էկոհամակարգերով, այդ թվում՝ լեռնային շրջանների էկոհամակարգերով շրջաններ ունեցող երկրներին,

ը/ այն երկրներին, որոնց տնտեսությունը մեծապես կախված է հանածո վառելիքի տեսակների եւ դրանց հետ կապված էներգատար արտադրատեսակների արտադրության, վերամշակման, արտահանման եւ/կամ սպառման արդյունքում ստացվող եկամուտներից,

թ/ դեպի ծով ելք չունեցող եւ տարանցիկ երկրներին:

Հետագայում Կողմերի Համաժողովն անհրաժեշտության դեպքում կարող է միջոցներ ձեռնարկի սույն կետի առնչությամբ:

9. Կողմերը լիարժեք կերպով հաշվի են առնում առավել ցածր զարգացած պետությունների՝ ֆինանսավորման եւ տեխնոլոգիաների փոխանցման հետ կապված որոշակի կարիքներն ու հատուկ պայմանները:

10. Սույն Կոնվենցիայով սահմանված իրենց պարտավորությունները կատարելիս Կողմերը, 10-րդ հոդվածին համապատասխան, հաշվի են առնում այն Կողմերի դրությունը, մասնավորապես, զարգացող երկրներ հանդիսացող Կողմերի դրությունը, որոնց տնտեսությունը խոցելի է կլիմայի փոփոխությանն արձագանքելու միջոցների իրականացման բացասական հետեւանքների առջեւ: Հիմնականում դա վերաբերում է այն Կողմերին, որոնց տնտեսությունը մեծապես կախված է հանածո վառելիքի տեսակների եւ դրանց հետ կապված էներգատար արտադրատեսակների արտադրության, վերամշակման, արտահանման եւ/կամ սպառման արդյունքում ստացվող եկամուտներից, եւ/կամ հանածո վառելիքի տեսակների սպառման այնպիսի եղանակներից, որոնց փոփոխման կամ այլ եղանակների անցնելու դեպքում այդպիսի Կողմերը լուրջ դժվարությունների առջեւ

կհայտնվեն:

ՀՈԴՎԱԾ 5. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՎԱԾ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

4-րդ հոդվածի 1-ին կետի "է" ենթակետով սահմանված իրենց պարտավորությունները կատարելիս Կողմերը՝

ա/ անհրաժեշտության դեպքում օժանդակում եւ ամրապնդում են միջազգային եւ միջկառավարական այն ծրագրերի եւ ցանցերի կամ կազմակերպությունների գործունեությունը, որոնց նպատակն է հետազոտությունների նախապատրաստումը, անցկացումը, գնահատումը եւ ֆինանսավորումը, ինչպես նաեւ տվյալների հավաքագրումն ու համակարգված դիտարկումների անցկացումը՝ նկատի առնելով ջանքերի կրկնօրինակման նվազեցման անհրաժեշտությունը,

բ/ աջակցում են, հատկապես զարգացող երկրներում, գիտատեխնիկական հետազոտությունների բնագավառում համակարգված դիտարկումների եւ ազգային ներուժի ամրապնդմանն ազգային իրավազորության սահմաններից դուրս գտնվող շրջաններից ստացված տվյալների եւ դրանց վերլուծության եւ փոխանակման արդյունքների մատչելիության ապահովմանն ուղղված միջազգային եւ միջկառավարական ջանքերին,

գ/ հաշվի են առնում զարգացող երկրների շահերն ու կարիքները եւ համագործակցում են "ա" եւ "բ" ենթակետերում նշված ջանքերին մասնակցելու համար անհրաժեշտ նրանց ազգային ներուժի եւ կարողությունների ամրապնդման գործում:

ՀՈԴՎԱԾ 6. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՎ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԶԵԿՈՒՄ

4-րդ հոդվածի 11-րդ կետով սահմանված իրենց պարտավորությունները կատարելիս Կողմերը.

ա/ ազգային եւ, անհրաժեշտության դեպքում, ենթատարածաշրջանային եւ տարածաշրջանային մակարդակի վրա եւ իրենց ազգային օրենսդրությանը, նորմերին եւ կարողություններին համապատասխան, նպաստում եւ օժանդակում են.

i. կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքների հետ կապված հիմնախնդիրների վերաբերյալ հանրության ուսուցման եւ իրազեկման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,

ii. կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքների վերաբերյալ տեղեկատվության մատչելիության ապահովմանը,

iii. կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքների հետ կապված խնդիրներին նվիրված քննարկումներին եւ արձագանքման համապատասխան միջոցների մշակմանը հանրության մասնակցությանը, եւ

iv. գիտական, տեխնիկական եւ ղեկավար կադրերի պատրաստմանը,

բ/ միջազգային մակարդակի վրա, անհրաժեշտության դեպքում՝ գործող մարմինների միջոցով, համագործակցում եւ օժանդակում են.

i. հանրության ուսուցման եւ իրազեկման նպատակով կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքների հետ կապված խնդիրներին նվիրված նյութերի մշակմանն ու փոխանակմանը,

ii. կադրերի պատրաստման ոլորտում ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, ներառյալ ազգային հաստատությունների ամրապնդումն ու աշխատակիցների փոխանակումը կամ գործուղումը այս ոլորտում փորձագետներ պատրաստելու նպատակով, հատկապես զարգացող երկրների համար:

ՀՈԴՎԱԾ 7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ

1. Սույնով հիմնադրվում է Կողմերի Համաժողով:

2. Կողմերի Համաժողովը, հանդիսանալով սույն Կոնվենցիայի գերագույն մարմինը, պարբերաբար ուսումնասիրում է Կոնվենցիայի եւ դրա հետ կապված՝ Կողմերի Համաժողովի կողմից ընդունված ցանկացած իրավական փաստաթղթի կատարման հետ կապված
խնդիրները եւ իր լիազորությունների շրջանակներում ընդունում է Կոնվենցիայի արդյունավետ իրագործմանը նպաստելուն ուղղված որոշումներ: Այդ նպատակով Կողմերի Համաժողովը.

ա/ պարբերաբար քննության է ենթարկում Կողմերի պարտավորությունները եւ Կոնվենցիայով նախատեսված վարչական մեխանիզմները Կոնվենցիայի նպատակների, դրա
իրագործման ընթացքում կուտակված փորձի եւ գիտատեխնիկական գիտելիքների զարգացման տեսանկյունից,

բ/ խրախուսում եւ օժանդակում է կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքներին արձագանքման՝ Կողմերի ձեռնարկվող միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանը՝ հաշվի առնելով Կողմերի պայմանների, պարտականությունների եւ կարողությունների մեջ տարբերությունները եւ սույն Կոնվենցիայով սահմանված նրանց պարտավորությունները,

գ/ երկու կամ ավելի Կողմերի խնդրանքով՝ օժանդակում է նրանց կողմից կլիմայի փոփոխության եւ դրա հետեւանքներին արձագանքման նպատակով իրականացվող միջոցների
համադրմանը՝ հաշվի առնելով Կողմերի պայմանների, պարտականությունների եւ կարողությունների մեջ տարբերությունները եւ Կոնվենցիայով սահմանված նրանց պարտավորությունները,

դ/ սույն Կոնվենցիայի նպատակներին եւ դրույթներին համապատասխան՝ աջակցում եւ ղեկավարում է Կողմերի Համաժողովի կողմից համաձայնեցման ենթակա համեմատելի մեթոդաբանությունների մշակման եւ պարբերական թարմացման աշխատանքները, մասնավորապես, աղբյուրներից ջերմոցային գազերի արտանետումների եւ կլանիչներով դրանց կլանման կադաստրներ պատրաստելու եւ այդ գազերի արտանետումների սահմանափակմանն ու կլանման աստիճանի բարձրացմանն ուղղված միջոցների արդյունավետության գնահատման նպատակով,

ե/ Կոնվենցիայի դրույթների համաձայն իրեն տրամադրված ամբողջ տեղեկատվության հիման վրա գնահատական է տալիս սույն Կոնվենցիային համապատասխան
իրականացված միջոցների ընդհանուր հետեւանքներին, մասնավորապես, բնապահպանական,
տնտեսական եւ սոցիալական հետեւանքներին, ինչպես նաեւ դրանց միասնական ազդեցությանը եւ Կոնվենցիայի նպատակների իրագործման մեջ տեղի ունեցած առաջընթացին,

զ/ ուսումնասիրում եւ հաստատում է սույն Կոնվենցիայի իրագործման վերաբերյալ պարբերական զեկույցները եւ ապահովում է դրանց հրապարակումը,

է/ առաջարկություններ է ներկայացնում սույն Կոնվենցիայի իրագործման համար անհրաժեշտ ցանկացած հարցի առնչությամբ,

ը/ 4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերին, ինչպես նաեւ 11-րդ հոդվածին համապատասխան՝ ձգտում է մոբիլիզացնել ֆինանսական աղբյուրները,

թ/ ստեղծում է այնպիսի օժանդակ մարմիններ, որոնք կարող են անհրաժեշտ համարվել սույն Կոնվենցիայի իրագործման համար,

ժ/ ուսումնասիրում է օժանդակ մարմինների կողմից ներկայացված զեկույցները եւ իրականացնում է դրանց գործունեության ղեկավարությունը,

ժա/ համաձայնեցնում եւ փոխադարձ համաձայնությամբ ընդունում է իր եւ

ցանկացած օժանդակ մարմնի ընթացակարգի եւ ֆինանսական կանոնները,

ժբ/ անհրաժեշտության դեպքում հայցում եւ օգտագործում է համապատասխան միջազգային կազմակերպությունների եւ միջկառավարական եւ ոչ կառավարական մարմինների ծառայություններն ու համագործակցությունը եւ օգտագործում է նրանց կողմից տրամադրված տեղեկատվությունը, եւ

ժգ/ իրականացնում է սույն Կոնվենցիայի նպատակների իրագործման համար անհրաժեշտ ցանկացած այլ գործառույթ, ինչպես նաեւ Կոնվենցիայի համաձայն իր ստանձնած այլ գործառույթ:

3. Կողմերի Համաժողովն իր առաջին նիստում ընդունում է իր ընթացակարգի կանոնները, ինչպես նաեւ սույն Կոնվենցիայի համաձայն ստեղծված իր օժանդակ մարմինների ընթացակարգի կանոնները, որոնք ներառում են այնպիսի հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելու ընթացակարգերը, որոնք ներառված չեն սույն Կոնվենցիայով նախատեսված որոշումների ընդունման ընթացակարգերի մեջ:

4. Կողմերի Համաժողովի առաջին նիստը գումարվում է 21-րդ հոդվածում նշված ժամանակավոր քարտուղարության կողմից, եւ անցկացվում է ոչ ուշ, քան սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից մեկ տարի հետո: Հետագայում Կողմերի Համաժողովի հերթական նիստերն անցկացվում են տարին մեկ անգամ, եթե Կողմերի Համաժողովն այլ կերպ չի որոշում:

5. Կողմերի Համաժողովի արտահերթ նիստերը գումարվում են այնպիսի ժամկետներում, որոնք Համաժողովն անհրաժեշտ է համարում, կամ էլ Կողմերից որեւէ մեկի գրավոր դիմումի հիման վրա՝ պայմանով, որ քարտուղարության կողմից այդ դիմումն այլ Կողմերին ուղղելուց հետո վեց ամսվա ընթացքում դրան կմիանա Կողմերի ընդհանուր թվի ոչ պակաս, քան մեկ երրորդը:

6. Միավորված ազգերի կազմակերպությունը, նրա մասնագիտացված հաստատություններն ու Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը, ինչպես նաեւ այդ կազմակերպությունների անդամ հանդիսացող կամ դիտորդի կարգավիճակ ունեցող, սակայն սույն Կոնվենցիայի Կողմ չհանդիսացող ցանկացած պետություն կարող են ներկայացված լինել Կողմերի Համաժողովում՝ որպես դիտորդներ: Ցանկացած մարմին կամ գործակալություն, լինի դա ազգային թե միջազգային, կառավարական թե ոչ կառավարական, որն իրավասու է սույն Կոնվենցիայի գործողության ոլորտին առնչվող հարցերում, եւ որը քարտուղարությանն է հայտնում Կողմերի Համաժողովում որպես դիտորդ ներկայացված լինելու իր ցանկության մասին, կարող է մասնակցելու թույլտվության ստանալ՝ պայմանով, որ այդ մասնակցության դեմ հանդես չի գա ներկա գտնվող Կողմերի թվի առնվազն մեկ երրորդը: Դիտորդների մասնակցության թույլտվությունն ու մասնակցությունը կարգավորվում են Կողմերի Համաժողովի կողմից ընդունված ընթացակարգի կանոններով:

ՀՈԴՎԱԾ 8. ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ

1. Սույնով հիմնադրվում է քարտուղարություն:

2. Քարտուղարությունն իրականացնում է հետեւյալ գործառույթները.

ա/ կազմակերպում է Կողմերի Համաժողովի եւ Կոնվենցիայի համաձայն ստեղծված իր օժանդակ մարմինների նիստերը եւ դրանց մատուցում անհրաժեշտ ծառայություններ,

բ/ ապահովում է իրեն ներկայացված զեկույցների բանաքաղումն ու հանձնումը,

գ/ համապատասխան դիմում ստանալու դեպքում աջակցություն է ցուցաբերում Կողմերին, մասնավորապես, զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին, սույն Կոնվենցիայի դրույթների համաձայն պահանջվող տեղեկատվության հավաքման եւ տրամադրման գործում,

դ/ զեկույցներ է պատրաստում իր գործունեության վերաբերյալ եւ դրանք ներկայացնում Կողմերի Համաժողովին,

ե/ ապահովում է համապատասխան այլ միջազգային մարմինների

քարտուղարությունների հետ փոխգործակցության համադրումը,
զ/ Կողմերի Համաժողովի ընդհանուր ղեկավարության ներքո ստեղծում է այնպիսի վարչարարական եւ պայմանագրային կապեր, որոնք կարող են պահանջվել իր գործառույթների արդյունավետ իրականացման համար,
է/ իրականացնում է սույն Կոնվենցիայով եւ դրան կից արձանագրություններով նախատեսված այլ քարտուղարային գործառույթներ, ինչպես նաեւ Կողմերի Համաժողովի կողմից սահմանված այլ գործառույթներ:
3. Կողմերի Համաժողովն իր առաջին նիստում սահմանում է մշտական քարտուղարության կազմը եւ կազմակերպում է դրա գործունեությունը:

ՀՈԴՎԱԾ 9. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ

1. Սույնով հիմնադրվում է գիտատեխնիկական խորհրդատվական օժանդակ մարմինը՝ Կողմերի Համաժողովը եւ, անհրաժեշտության դեպքում, նրա այլ օժանդակ մարմինները՝ Կոնվենցիային առնչվող գիտատեխնիկական ասպեկտների վերաբերյալ վերջին տեղեկատվությամբ եւ խորհրդատվությամբ ապահովելու նպատակով: Սույն մարմնի անդամակցությունը բաց է բոլոր Կողմերի համար, եւ այն բազմադիսցիպլինար մարմին է: Այն կազմված է գիտության համապատասխան բնագավառներում իրավասու կառավարությունների ներկայացուցիչներից: Այն պարբերաբար զեկույցներ է ներկայացնում Կողմերի Համաժողովին իր գործունեության բոլոր ասպեկտների վերաբերյալ:
2. Կողմերի Համաժողովի ղեկավարության ներքո եւ հենվելով գործող իրավասու միջազգային մարմինների վրա, սույն մարմինը.
ա/ տալիս է կլիմայի փոփոխությանը եւ դրա հետեւանքներին առնչվող գիտական գիտելիքների գնահատականը,
բ/ տալիս է սույն Կոնվենցիայի իրագործման ընթացքում ձեռնարկվող միջոցների ազդեցության գիտական գնահատականը,
գ/ հատկանշում է նոր, արդյունավետ եւ ամենաարդիական տեխնոլոգիաները եւ "նոու-հաու"-ն եւ առաջարկություններ է ներկայացնում այդպիսի տեխնոլոգիաների փոխանցմանը եւ/կամ դրանց մշակմանն օժանդակելու ուղիների եւ միջոցների վերաբերյալ,
դ/ առաջարկություններ է ներկայացնում կլիմայի փոփոխությանն առնչվող հետազոտությունների եւ մշակումների ոլորտում գիտական ծրագրերի իրականացման եւ միջազգային համագործակցության ընդլայնման, ինչպես նաեւ զարգացող երկրներում ազգային ներուժի ստեղծմանն աջակցելու ուղիների եւ միջոցների վերաբերյալ, եւ
ե/ տալիս է գիտատեխնիկական եւ մեթոդաբանական բնույթի այնպիսի հարցերի պատասխանները, որոնցով տվյալ մարմին կարող են դիմել Կողմերի Համաժողովը եւ դրա օժանդակ մարմինները:
3. Սույն մարմնի գործառույթներն ու լիազորությունների շրջանակները կարող են ավելի մանրամասն սահմանվել Կողմերի Համաժողովի կողմից:

ՀՈԴՎԱԾ 10. ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ

1. Սույնով հիմնադրվում է իրագործման օժանդակ մարմին, որն օժանդակություն է ցուցաբերում Կողմերի Համաժողովին սույն Կոնվենցիայի իրագործման արդյունավետության գնահատման եւ ուսումնասիրման գործում: Սույն մարմինը բաց է բոլոր Կողմերի անդամակցության համար եւ կազմված է կլիմայի փոփոխության ոլորտում փորձագետներ հանդիսացող՝ Կառավարությունների ներկայացուցիչներից: Նա պարբերաբար զեկույցներ է ներկայացնում Կողմերի Համաժողովին իր գործունեության բոլոր ասպեկտների վերաբերյալ:
2. Կողմերի Համաժողովի ղեկավարության ներքո սույն մարմինը.

ա/ ուսումնասիրում է սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն տրամադրվող տեղեկատվությունը՝ կլիմայի փոփոխության ոլորտում գիտական գնահատականների հիման վրա Կողմերի ձեռնարկած միջոցների ընդհանուր միասնական ազդեցության գնահատման նպատակով,

բ/ ուսումնասիրում է սույն Կոնվենցիայի 12-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն տրամադրվող տեղեկատվությունը՝ սույն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ կետի "դ" ենթակետով նախատեսված ուսումնասիրությունների իրականացման գործում Կողմերի Համաժողովին օժանդակություն ցուցաբերելու նպատակով,

գ/ ըստ անհրաժեշտության՝ օժանդակություն է ցուցաբերում Կողմերի Համաժողովին՝ վերջինիս որոշումների նախապատրաստման եւ կատարման գործում:

ՀՈԴՎԱԾ 11. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄ

1. Սույնով սահմանվում է ֆինանսական միջոցների անհատույց կամ արտոնյալ պայմաններով տրամադրման մեխանիզմ, այդ թվում՝ տեխնոլոգիաների փոխանցման նպատակով: Այն գործում է Կողմերի Համաժողովի ղեկավարության ներքո եւ հաշվետու է իր առջեւ, որը սահմանում է մեխանիզմի քաղաքականությունը, ծրագրային առաջնայնությունները եւ սույն Կոնվենցիային առնչվող ընտրության չափանիշները: Դրա գործունեության ղեկավարումը ստանձնվում է մեկ կամ մի քանի գործող միջազգային մարմինների կողմից:

2. Ֆինանսական մեխանիզմը նախատեսում է բոլոր Կողմերի արդարացի եւ հավասարակշռված ներկայացուցչությունը ղեկավարման բաց համակարգի շրջանակներում:

3. Կողմերի Համաժողովը եւ ֆինանսական մեխանիզմի ղեկավարությունն իրականացնող մարմինը կամ մարմինները միմյանց միջեւ համաձայնեցնում են վերը նշված դրույթների իրագործման ընթացակարգերը, որոնք ներառում են.

ա/ Կողմերի Համաժողովի սահմանած քաղաքականությանը, ծրագրային առաջնայնություններին եւ ընտրության չափանիշներին կլիմայի փոփոխության ոլորտում ֆինանսավորվող ծրագրերի համապատասխանությունն ապահովող պայմանները,

բ/ այն պայմանները, որոնց առկայության դեպքում ֆինանսավորման վերաբերյալ ընդունված որոշումը կարող է վերանայվել՝ հաշվի առնելով այդ քաղաքականությունը, ծրագրային առաջնայնությունները եւ ընտրության չափանիշները,

գ/ մարմնի կամ մարմինների կողմից Կողմերի Համաժողովին իրենց ֆինանսական գործարքների վերաբերյալ զեկույցների պարբերաբար ներկայացումն, ինչը համապատասխանում է վերը նշված 1-ին կետով սահմանված՝ հաշվետվության պահանջներին,

դ/ կանխատեսելի եւ հատկանշելի եղանակով սույն Կոնվենցիայի իրագործման համար անհրաժեշտ եւ առկա ֆինանսական միջոցների ծավալի որոշումը եւ այդ ծավալի պարբերաբար վերանայման համար անհրաժեշտ պայմանների սահմանումը:

4. Կողմերի Համաժողովը, ուսումնասիրության հիման վրա եւ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի 21-րդ հոդվածի 3-րդ կետում նշված ժամանակավոր մեխանիզմները, իր առաջին նիստին սահմանում է վերը նշված դրույթների կատարման ընթացակարգերը եւ որոշում է ընդունում այդ ժամանակավոր մեխանիզմների պահպանման նպատակահարմար
լինելու մասին: Դրանից ոչ ուշ, քան չորս տարի հետո Կողմերի Համաժողովն իրականացնում է այդ ֆինանսական մեխանիզմի ուսումնասիրությունը եւ համապատասխան
միջոցներ է ձեռնարկում:

5. Զարգացած երկրներ հանդիսացող Կողմերը սույն Կոնվենցիայի իրագործման նպատակով երկկողմանի, տարածաշրջանային եւ այլ բազմակողմանի ուղիների միջոցով

կարող են նաեւ տրամադրել, իսկ զարգացող երկրներ հանդիսացող Կողմերը՝ ընդունել, ֆինանսական միջոցներ:

ՀՈԴՎԱԾ 12. ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

1. Սույն Կոնվենցիայի 4-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր Կողմ Կողմերի Համաժողովին քարտուղարության միջոցով տրամադրում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա/ Մոնրեալի արձանագրությամբ չկարգավորվող բոլոր ջերմոցային գազերի աղբյուրներից կատարվող մարդածին արտանետումների եւ կլանիչներով դրանց կլանման ազգային կադաստրը՝ այնքանով, որքանով թույլ են տալիս դրանց կարողությունները, կիրառելով Կողմերի Համաժողովի կողմից առաջարկվող եւ համաձայնեցման ենթակա համատեղելի մեթոդաբանությունները,

բ/ Կողմերի՝ ձեռնարկված կամ նախատեսված՝ Կոնվենցիայի իրագործմանն ուղղված միջոցների ընդհանուր նկարագրությունը, եւ

գ/ ցանկացած այլ տեղեկատվություն, որը Կողմը համարում է Կոնվենցիայի նպատակների իրագործմանն առնչվող եւ իր հաղորդագրության մեջ ընդգրկման համար տեղին, այդ թվում, հնարավորության դեպքում, արտանետումների գլոբալ միտումների հաշվարկներին առնչվող նյութերը:

2. Զարգացած երկիր հանդիսացող յուրաքանչյուր Կողմ եւ 1-ին հավելվածում ներառված յուրաքանչյուր այլ Կողմ իր հաղորդագրության մեջ ընդգրկում է հետեւյալ տեղեկատվությունը.

ա/ իր կողմից՝ ի կատարումն 4-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" եւ "բ" ենթակետերով սահմանված պարտավորությունների իրականացվող քաղաքականության եւ միջոցների մանրամասն նկարագրությունը, եւ

բ/ այն ազդեցության գնահատականը, որը կգործի "ա" ենթակետում նշված քաղաքականությունն ու միջոցներն իր աղբյուրներից ջերմոցային գազերի մարդածին արտանետումների եւ դրանց կլանման վրա 4-րդ հոդվածի 2-րդ կետի "ա" ենթակետում նշված ժամանակահատվածում:

3. Բացի այդ՝ զարգացած երկիր հանդիսացող յուրաքանչյուր Կողմ եւ 2-րդ հավելվածում ներառված՝ զարգացած երկրների թվին դասվող յուրաքանչյուր այլ Կողմ մանրամասն տեղեկություններ են ընդգրկում 4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կետերի համաձայն ձեռնարկված միջոցների վերաբերյալ:

4. Զարգացող երկրներ հանդիսացող Կողմերը կարող են կամավոր հիմունքներով ֆինանսավորման համար ծրագրեր առաջարկել, ներառյալ որոշակի տեխնոլոգիաները, նյութերը, սարքավորումները, մեթոդներն ու գործնական մոտեցումները, որոնք կպահանջվեն այդ ծրագրերի իրականացման համար, ինչպես նաեւ, ըստ դրանց կարողությունների՝ բոլոր լրացուցիչ ծախսերի նախահաշիվը, ջերմոցային գազերի արտանետումների կրճատման եւ կլանման բարձրացման գնահատականը եւ համապատասխան
օգտակար արդյունքի գնահատականը:

5. Զարգացած երկիր հանդիսացող յուրաքանչյուր Կողմ եւ 1-ին հավելվածում ներառված յուրաքանչյուր այլ Կողմ իր առաջին հաղորդագրությունն ուղարկում է այդ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում: Նշված ցանկում չներառված յուրաքանչյուր Կողմ իր հաղորդագրությունն ուղարկում է այդ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում, կամ էլ, 4-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան, ֆինանսական միջոցների առկայության դեպքում: Առավել թույլ զարգացած երկրներ հանդիսացող Կողմերն իրենց առաջին հաղորդագրությունները կարող են ուղարկել իրենց իսկ հայեցողությամբ: Կողմերի հետագա հաղորդագրությունների հաճախականությունը սահմանում է Կողմերի Համաժողովը՝ հաշվի առնելով սույն կետով սահմանված

տարբերակված ժամանակացույցը:
6. Սույն հոդվածի համաձայն Կողմերի տրամադրած տեղեկատվությունը քարտուղարության կողմից առավել սեղմ ժամկետներում ուղարկվում է Կողմերի Համաժողովին եւ համապատասխան օժանդակ մարմիններին: Անհրաժեշտության դեպքում Կողմերի Համաժողովը կարող է ավելի մանրամասն ուսումնասիրել տեղեկատվության տրամադրման ընթացակարգերը:
7. Իր առաջին նիստից սկսած՝ Կողմերի Համաժողովը միջոցներ է ձեռնարկում զարգացող երկրներ հանդիսացող Կողմերին, իրենց խնդրանքով, տեխնիկական եւ ֆինանսական աջակցության ցուցաբերման ուղղությամբ՝ սույն հոդվածի համաձայն տրամադրվելիք տեղեկատվության հավաքման եւ տրամադրման, ինչպես նաեւ առաջարկվող ծրագրերի եւ 4-րդ հոդվածին համապատասխան արձագանքման միջոցների հետ կապված տեխնիկական եւ ֆինանսական կարիքների հատկորոշման ոլորտներում: Այդպիսի աջակցությունը կարող է նաեւ ըստ անհրաժեշտության ցուցաբերվել այլ Կողմերից, իրավասու միջազգային կազմակերպությունների եւ քարտուղարության կողմից:
8. Կողմերի Համաժողովի կողմից ընդունված ղեկավար սկզբունքներին համապատասխան եւ առաջինիս նախապես այդ մասին տեղյակ պահելու պայմանով՝ Կողմերի ցանկացած խումբ կարող է համատեղ հաղորդագրություն ներկայացնել՝ ի կատարումն սույն հոդվածով սահմանված պահանջների՝ պայմանով, որ այդ հաղորդագրության մեջ ներառված լինեն տեղեկություններ այդ Կողմերից յուրաքանչյուրի Կոնվենցիայով սահմանված պարտավորությունների վերաբերյալ:
9. Քարտուղարության կողմից ստացված եւ Կողմերի Համաժողովի կողմից սահմանվելիք չափանիշներին համապատասխան որպես գաղտնի նշված տեղեկատվությունը գաղտնիության պահպանման նպատակով քարտուղարության կողմից միավորվում է մինչեւ այն տեղեկատվության տրամադրման եւ ուսումնասիրման որեւէ մարմին ներկայացնելը:
10. Սույն հոդվածի 9-րդ կետի համաձայն եւ առանց ցանկացած պահի իր հաղորդագրությունը հրապարակելու Կողմին վերագրված իրավունքը խախտելու՝ քարտուղարությունը, սույն հոդվածին համապատասխան, հրապարակում է Կողմերի հաղորդագրությունները դրանք Կողմերի Համաժողովին ներկայացնելու պահին:

ՀՈԴՎԱԾ 13. ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Կողմերի Համաժողովն իր առաջին նիստում քննության է առնում, նրանց խնդրանքով, Կողմերին Կոնվենցիայի իրագործման հետ կապված խնդիրների կարգավորման համար նախատեսված բազմակողմ խորհրդակցական մեխանիզմի մշակման հարցը:

ՀՈԴՎԱԾ 14. ՎԵՃԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

1. Երկու կամ ավելի Կողմերի միջեւ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ իրագործման հետ կապված վեճերի ծագման դեպքում շահագրգիռ Կողմերը ձգտում են այդ վեճը կարգավորել բանակցությունների միջոցով կամ, իրենց ընտրությամբ, ցանկացած այլ խաղաղ միջոցով:
2. Կոնվենցիայի վավերացման, ընդունման, հաստատման կամ դրան միանալու ժամանակ կամ դրանցից հետո ցանկացած պահի տնտեսական ինտեգրման տարածաշրջանային

կազմակերպության անդամ չհանդիսացող Կողմը կարող է գրավոր դիմում ներկայացնել ավանդապահին այն մասին, որ սույն Կոնվենցիայի մեկնաբանման կամ իրագործման հետ կապված ցանկացած վեճի դեպքում այն նույն պարտավորությունն ստանձնած ցանկացած այլ Կողմի նկատմամբ, առանց որեւէ հատուկ համաձայնության եւ որպես ipso facto, պարտադիր պայման է ճանաչում.

ա/ վեճերի փոխանցումը Միջազգային դատարանին, եւ/կամ

բ/ իրավարարությունը՝ Կողմերի Համաժողովի կողմից հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունման ենթակա՝ իրավարարության վերաբերյալ հավելվածում սահմանված ընթացակարգերին համապատասխան:

Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության անդամ հանդիսացող
Կողմը կարող է հանդես գալ համանման հայտարարությամբ "բ" ենթակետում նշված ընթացակարգերին համապատասխան իրավարարության վերաբերյալ:

3. 2-րդ կետի համաձայն արված հայտարարությունը ուժի մեջ է մնում մինչեւ այդ հայտարարության մեջ նշված՝ դրա գործողության ժամկետի ավարտը կամ այն հետ վերցնելու մասին գրավոր ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու պահից երեք ամսվա ընթացքում:

4. Նոր հայտարարությունը, ինչպես նաեւ այն հետ վերցնելու կամ դրա գործողության ավարտի մասին ծանուցումը ոչ մի կերպ չեն ազդում Միջազգային դատարանի կամ միջնորդ դատարանի վարույթում գտնվող գործերի վրա, եթե վեճի կողմերն այլ կերպ չեն պայմանավորվում:

5. 2-րդ կետի դրույթներին համապատասխան՝ եթե որեւէ Կողմից մեկ այլ Կողմին դրանց միջեւ վեճի ծագման մասին ծանուցելու պահից տասներկու ամիսը լրանալուն պես շահագրգիռ կողմերը չեն կարողացել կարգավորել իրենց միջեւ ծագած վեճը 1-ին կետում նշված միջոցների օգնությամբ, ապա այդ վեճը, Կողմերից որեւէ մեկի խնդրանքով, առաջադրվում է հաշտեցման ընթացակարգի համար:

6. Հաշտեցման հանձնաժողովը կազմավորվում է վեճի կողմերից որեւէ մեկի խնդրանքով: Հանձնաժողովը կազմված է յուրաքանչյուր կողմից նշանակված հավասար թվով անդամներից եւ այդ անդամների կողմից ընտրված նախագահից: Հանձնաժողովը կայացնում է հանձնարարական որոշում եւ Կողմերը բարեխղճորեն քննարկում են այն:

7. Հաշտեցման հետ կապված լրացուցիչ ընթացակարգերը հնարավորինս սեղմ ժամկետներում ընդունվում են Կողմերի Համաժողովի կողմից՝ հաշտեցմանը վերաբերող հավելվածում:

8. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են ցանկացած համապատասխան իրավական փաստաթղթի նկատմամբ, որը կարող է ընդունել Կողմերի Համաժողովը, եթե այդ փաստաթղթով այլ բան նախատեսված չէ:

ՀՈԴՎԱԾ 15. ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼԸ

1. Ցանկացած Կողմ կարող է առաջարկել սույն Կոնվենցիայում կատարել փոփոխություններ եւ լրացումներ:

2. Կոնվենցիայում փոփոխությունները եւ լրացումներն ընդունվում են Կողմերի Համաժողովի հերթական նիստում: Քարտուղարությունը ցանկացած առաջարկվող փոփոխության տեքստ Կողմերին է փոխանցում դրա հաստատման նիստից առնվազն վեց ամիս առաջ: Քարտուղարությունը առաջարկվող փոփոխությունների տեքստերը փոխանցում
է նաեւ Կոնվենցիան ստորագրած Կողմերին եւ, որպես տեղեկատվություն, ավանդապահին:

3. Կողմերը ձեռնարկում են բոլոր հնարավոր ջանքերը, որպեսզի Կոնվենցիայում ցանկացած առաջարկվող փոփոխություն կամ լրացում ընդունվի փոխադարձ համաձայնությամբ: Եթե փոխադարձ համաձայնության ձեռքբերմանն ուղղված բոլոր

ջանքերը սպառվել են, եւ համաձայնություն ձեռք չի բերվել, ապա, որպես վերջին միջոց, փոփոխությունն ընդունվում է տվյալ նիստին ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող անդամների ձայների երեք քառորդ մեծամասնությամբ: Քարտուղարությունը հայտնում է ընդունված փոփոխության տեքստը ավանդապահին, որն այն փոխանցում է բոլոր Կողմերին՝ ընդունման համար:

4. Փոփոխությունն ընդունելու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին: 3-րդ կետի համաձայն ընդունված փոփոխությունն այն ընդունած Կողմերի համար ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից սույն Կոնվենցիայի Կողմերի առնվազն երեք քառորդի ընդունման մասին փաստաթղթերն ստանալու պահից ինսուներորդ օրը:

5. Ցանկացած այլ Կողմի համար փոփոխությունն ուժի մեջ է մտնում այդ Կողմից նշված փոփոխությունն ընդունվելու մասին փաստաթուղթն ավանդապահին ի պահ հանձնելու պահից ինսուներորդ օրը:

6. Սույն հոդվածի իմաստով՝ "ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող Կողմեր են" համարվում ներկա գտնվող եւ "կողմ" կամ "դեմ" քվեարկած Կողմերը:

ՀՈԴՎԱԾ 16. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ

1. Սույն Կոնվենցիայի հավելվածները հանդիսանում են դրա անբաժանելի մասը եւ, եթե ուղղակիորեն այլ կերպ նախատեսված չէ, Կոնվենցիային կատարվող ցանկացած հղում միաժամանակ հղում է հանդիսանում է նրա ցանկացած հավելվածին: Առանց խախտելու 14-րդ հոդվածի 2-րդ կետի "բ" ենթակետը եւ 7-րդ կետը, այդ հավելվածները սահմանափակվում են ցանկերով, ձեւերով կամ նկարագրական բնույթի ցանկացած այլ նյութերով, որոնք վերաբերում են գիտական, տեխնիկական, ընթացակարգային կամ վարչարարական հարցերին:

2. Կոնվենցիայի հավելվածներն առաջարկվում եւ ընդունվում են 15-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ կետերով սահմանված կարգով:

3. 2-րդ կետի համաձայն ընդունված հավելվածը Կոնվենցիայի բոլոր Կողմերի համար ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից այդ Կողմերին տվյալ հավելվածի ընդունման մասին ծանուցման պահից վեց ամիս հետո՝ բացառությամբ այն Կողմերի, որոնք այդ ժամանակահատվածում ավանդապահին գրավոր ծանուցել են իրենց կողմից այդ
հավելվածը չընդունվելու մասին: Այդ հավելվածն այն չընդունելու մասին իր ծանուցագիրը չեղյալ հայտարարող Կողմերի համար ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից չեղյալ հայտարարելու մասին ծանուցումն ստանալու պահից ինսուներորդ օրը:

4. Կոնվենցիայի հավելվածներում փոփոխությունները եւ լրացումները կատարվում են նույն կարգով, որը սահմանված է 2-րդ եւ 3-րդ կետերով Կոնվենցիայի հավելվածների առաջադրման, ընդունման եւ ուժի մեջ մտնելու համար:

5. Եթե հավելվածի կամ հավելվածի փոփոխության ընդունումը կապված է Կոնվենցիայում փոփոխություն կատարելու հետ, ապա այդ հավելվածը կամ դրանում առաջարկվող փոփոխությունն ուժի մեջ են մտնում միմիայն Կոնվենցիայում կատարված համապատասխան փոփոխության ուժի մեջ մտնելուց հետո:

ՀՈԴՎԱԾ 17. ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կողմերի Համաժողովն իր ցանկացած հերթական նիստում կարող է ընդունել սույն Կոնվենցիային կից արձանագրություններ:

2. Քարտուղարությունը ցանկացած այդպիսի արձանագրության տեքստ Կողմերին հաղորդում է նիստի գումարումից առնվազն վեց ամիս առաջ:

3. Ցանկացած այդպիսի արձանագրության ուժի մեջ մտնելու պայմանները սահմանվում են սույն փաստաթղթով:
4. Միայն սույն Կոնվենցիայի Կողմերը կարող են արձանագրության Կողմեր հանդիսանալ:
5. Ցանկացած արձանագրության հետ կապված որոշում կարող են ընդունել են միայն տվյալ արձանագրության Կողմերը:

ՀՈԴՎԱԾ 18. ՁԱՅՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ

1. Բացառությամբ սույն հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի՝ յուրաքանչյուր Կողմ ունի մեկ ձայն:
2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները իրենց իրավասության ներքո գտնվող հարցերին առնչվող քվեարկությանը մասնակցում են սույն Կոնվենցիայի Կողմ հանդիսացող իրենց անդամ պետությունների թվին հավասար ձայներով: Այդպիսի կազմակերպությունը չի օգտվում իր ձայնի իրավունքից, եթե այդ իրավունքից օգտվում է դրա անդամ պետություններից որեւէ մեկը, եւ հակառակը:

ՀՈԴՎԱԾ 19. ԱՎԱՆԴԱՊԱՀԸ

Սույն Կոնվենցիայի եւ 17-րդ հոդվածի համաձայն ընդունված արձանագրությունների ավանդապահի գործառույթներն իրականացնում է Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարը:

ՀՈԴՎԱԾ 20. ՍՏՈՐԱԳՐՈՒՄ

Սույն Կոնվենցիան բաց է ստորագրման համար Միավորված ազգերի կազմակերպության անդամ պետությունների, նրա ցանկացած մասնագիտացված մարմնի կամ
Միջազգային դատարանի ստատուսի անդամ պետությունների եւ տնտեսական ինտեգրման
տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ Ռիո դե Ժանեյրոյում՝ Միավորված ազգերի կազմակերպության՝ շրջակա միջավայրի եւ զարգացման համաժողովի անցկացման
ժամանակ, իսկ հետագայում՝ Նյու Յորքում՝ Միավորված ազգերի կազմակերպության կենտրոնական գրասենյակներում՝ 1992 թ. հունիսի 20-ից մինչեւ 1993 թ. հունիսի 19-ը:

ՀՈԴՎԱԾ 21. ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

1. 8-րդ հոդվածում նշված քարտուղարական գործառույթները ժամանակավոր հիմունքներով՝ մինչեւ Կողմերի Համաժողովի առաջին նիստի ավարտը, կիրականացվեն Միավորված ազգերի կազմակերպության կողմից՝ նրա՝ 1990 թ. դեկտեմբերի 21-ի թիվ 45/212 որոշման համաձայն ստեղծված քարտուղարության կողմից:
2. 1-ին կետում նշված ժամանակավոր քարտուղարության ղեկավարը սերտորեն համագործակցում է Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական խմբի հետ, որպեսզի ապահովի Խմբի կողմից գիտական եւ տեխնիկական բնույթի օբյեկտիվ խորհրդակցությունների անցկացման կարիքների բավարարումը: Խորհրդակցություններ կարող են անցկացվել նաեւ այլ համապատասխան գիտական մարմինների հետ:
3. Միավորված ազգերի կազմակերպության՝ շրջակա միջավայրի հարցերով զարգացման ծրագրի եւ Վերակառուցման եւ զարգացման միջազգային բանկի Բնապահպանական համաշխարհային հիմնադրամն այն միջազգային մարմինն է, որի վրա

ժամանակավորապես դրվում է 11-րդ հոդվածում նշված ֆինանսական մեխանիզմի կառավարումը: Այս առնչությամբ, 11-րդ հոդվածով սահմանված պահանջները կատարելու համար Բնապահպանական համաշխարհային հիմնադրամի կառուցվածքը ենթակա է համապատասխան փոփոխության, իսկ անդամակցության կարգը պետք է կրի ունիվերսալ բնույթ:

ՀՈԴՎԱԾ 22. ՎԱՎԵՐԱՑՈՒՄ, ԸՆԴՈՒՆՈՒՄ, ՀԱՍՏԱՏՈՒՄ ԿԱՄ ՄԻԱՑՈՒՄ

1. Սույն Կոնվենցիան ենթակա է վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալուն պետությունների եւ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունների կողմից: Այն միանալու համար բացվում է Կոնվենցիայի ստորագրման փակման հաջորդ օրվանից: Վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ են հանձնվում ավանդապահին:
2. Տնտեսական ինտեգրման տարածաշրջանային ցանկացած կազմակերպություն, սույն Կոնվենցիայի անդամ դառնալով այն դեպքում, երբ այդ կազմակերպության անդամ պետություններից ոչ մեկը սույն Կոնվենցիայի Կողմ չի հանդիսանում, ստանձնում է սույն Կոնվենցիայով նախատեսված բոլոր պարտավորությունները: Այն դեպքում, երբ այդպիսի կազմակերպության մեկ կամ ավելի անդամ պետություններ նույնպես հանդիսանում են Կոնվենցիայի Կողմեր, այդ կազմակերպությունը եւ դրա անդամ պետությունները որոշում են ընդունում Կոնվենցիայով նախատեսված իրենց պարտավորությունների կատարման հետ կապված համապատասխան պարտականությունների
վերաբերյալ: Նման դեպքերում ինչպես այդ կազմակերպությունն, այդպես էլ դրա անդամ պետությունները չեն կարող միաժամանակ օգտվել սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքներից:
3. Վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին իրենց փաստաթղթերում տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպությունները
հայտարարում են սույն Կոնվենցիայով կարգավորվող հարցերի նկատմամբ իրենց իրավասությունների շրջանակի մասին: Այդ կազմակերպությունները ավանդապահին անհապաղ տեղեկացնում են նաեւ իրենց իրավասությունների շրջանակի ցանկացած փոփոխության մասին:

ՀՈԴՎԱԾ 23. ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին հիսուներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելու պահից հինսուներորդ օրը:
2. Ցանկացած պետության կամ տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության համար, որը վավերացնում, ընդունում կամ հաստատում է սույն Կոնվենցիան կամ միանում է դրան վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու
մասին հիսուներորդ փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո, սույն Կոնվենցիան ուժի մեջ է մտնում այդ պետության կամ կազմակերպության կողմից վավերացման, ընդունման, հաստատման կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու պահից
հինսուներորդ օրը:
3. Սույն հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերի նպատակների համար տնտեսական ինտեգրման տարածաշրջանային կազմակերպության կողմից ի պահ հանձնված ոչ մի փաստաթուղթ չի դիտարկվում որպես այդ կազմակերպության անդամ պետությունների կողմից ի պահ հանձնված փաստաթղթերը լրացնող փաստաթուղթ:

ՀՈԴՎԱԾ 24. ՎԵՐԱՊԱՀՈՒՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի նկատմամբ վերապահումներ չեն կարող արվել:

ՀՈԴՎԱԾ 25. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ

1. Տվյալ Կողմի համար սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու պահից երեք տարին անցնելուն պես այդ Կողմը ցանկացած ժամանակ կարող է դուրս գալ սույն Կոնվենցիայից՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին:
2. Ցանկացած այդպիսի չեղյալ հայտարարում ուժի մեջ է մտնում դուրս գալու մասին ծանուցումն ավանդապահի ստանալու օրվանից մեկ տարին լրանալուն պես կամ ավելի ուշ, ինչպես կարող է սահմանվել դուրս գալու մասին ծանուցման մեջ:
3. Կոնվենցիայից դուրս եկող ցանկացած Կողմ համարվում է նաեւ ցանկացած այն արձանագրությունից դուրս եկած, որի Կողմ նա հանդիսանում է:

ՀՈԴՎԱԾ 26. ՀԱՎԱՍԱՐԱԶՈՐ ՏԵՔՍՏԵՐ

Սույն Կոնվենցիայի բնօրինակը, որի արաբերեն, չինարեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն եւ իսպաներեն տեքստերը հավասարազոր են, ի պահ է հանձնվում Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր քարտուղարին:
Ի հավաստումն որի՝ ներքոստորագրյալները, օժտված լինելով համապատասխան լիազորություններով, ստորագրեցին սույն Կոնվենցիան:
Կատարված է Նյու Յորք քաղաքում հազար ինը հարյուր իննսուներկու թվականի մայիսի իններին:

Հավելված 1

Ավստրալիա
Ավստրիա
Բելառուս *)
Բելգիա
Բուլղարիա *)
Հունգարիա *)
Գերմանիա
Հունաստան
Դանիա
Եվրոպական տնտեսական համագործակցություն
Իռլանդիա
Իսլանդիա
Իսպանիա
Իտալիա
Կանադա
Լատվիա *)
Լիտվա *)
Լյուքսեմբուրգ
Նիդերլանդներ
Նոր Զելանդիա
Նորվեգիա
Լեհաստան *)
Պորտուգալիա

Ռուսաստանի Դաշնություն *)
Ռումինիա *)
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն
Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Թուրքիա
Ուկրաինա *)
Ֆինլանդիա
Ֆրանսիա
Չեխոսլովակիա *)
Շվեյցարիա
Շվեդիա
Էստոնիա *)
Ճապոնիա

---

*) Երկրներ, որոնք գտնվում են շուկայական տնտեսության անցման շրջանում:

Հավելված 2

Ավստրալիա
Ավստրիա
Բելգիա
Գերմանիա
Հունաստան
Դանիա
Եվրոպական տնտեսական համագործակցություն
Իռլանդիա
Իսլանդիա
Իսպանիա
Իտալիա
Կանադա
Լյուքսեմբուրգ
Նիդերլանդներ
Նոր Զելանդիա
Նորվեգիա
Պորտուգալիա
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն
Ամերիկայի Միացյալ Նահանգներ
Թուրքիա
Ֆինլանդիա
Ֆրանսիա
Շվեյցարիա
Շվեդիա
Ճապոնիա

* Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի մարտի 21-ից: